Արձանագրություն 2
ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ՇՀԱՇՁԲ-11/3-15-7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17/12/15թ. ժամը 12:00-ին /Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող անդամներ՝ Ա.Մկրդումյանը, Մ. Միքաելյանը, բացող անդամներ Ա. Մարդոյանը, Մ.Սարդարյանը:

Գնումները համակարգող՝ Զ. Աբգարյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «***ՀՀ ՖՆ ՇՀԱՇՁԲ-11/3-15-7***» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր են ներկայացրել՝

1 <<Ասողիկ>> ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 00835755
2.<<Բլանկիրատ>> ՓԲԸ-ն /ՀՎՀՀ 00804213/
3.<<Վիամիր>>ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 03015191/
4. <<Բեկոր-հրատ>> ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 01009665/
5.<<Յասոն>> ՍՊԸ-ն/ՀՎՀՀ՝ 02540338/

1.2 Համակարգում 08.12.2015թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի,<<Վիամիր>>ՍՊԸ-ի,<<Բեկոր-հրատ>> ՍՊԸ-ի,.<<Յասոն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
2.2 <<Ասողիկ>> ՍՊԸ-ն Armeps համակարգի <<Մասնակցության չափորոշիչներ>> բաժնի <<Պիտանելիության չափորոշիչ>> ենթաբաժնում նշել է, որ ներկայացնում է Հավելված 1-ը և Հավելված 2-ը, սակայն ներբեռնել և ներկայացրել է՝ միայն Հավելված 2-ը, <<Որակավորման չափորոշիչներ>> ենթաբաժնում՝Հավելված 3.1, Հավելված 3.3, Հավելված 3.4, կամ Հավելված 3.5, Հավելված 3.6-ի փոխարեն ներբեռնել և ներկայացրել է միայն Հավելված 3.3-ը, ինչպես նաև՝ ներբեռնել և ներկայացրել է Հավելված 4-ը՝ գնային առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.1 <<Բեկոր-հրատ>> ՍՊԸ-ի,<<Վիամիր>>ՍՊԸ-ի, <<Ասողիկ>> ՍՊԸ-ի /Հավելված 2-ը, Հավելված 3.3-ը և Հավելված 4-ը/,<<Յասոն>> ՍՊԸ-ի -ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև՝ կազմված և ներկայացված են հրավերի պահանջների համապատասխան:

3.2 <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի կողմից Հավելված 4-ը՝ գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան /Առաջարկված ընդհանուր գինը տառերով և թվերով ներկայացելու փոխարեն ներկայացվել է միայն թվերով, այն է՝ 1 117 200/

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Մասնակիցների կողմից առաջարկված գներն են.

		Առարկայի անվանումը	Միավորի գինը դրամ	Գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	<<Ասողիկ>> ՍՊԸ	190000 հատ Հողի հարկի և գույքահարկի անդորրագրերի տպագրություն	9.3	1 480 833.0	296 166.7	1 777 000.0
2	<<Վիամիր>>ՍՊԸ		8.4	1 590 000.0	-	1 590 000.0
3	<<Բեկոր-հրատ>> ՍՊԸ		10	1 900 000.0	-	1 900 000.0
4	<<Յասոն>> ՍՊԸ		610	96 600 000.0	19 322 000	115 920 000.0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Մերժել <<Բլանկիրատ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5.2 Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով ծանուցելով <<Ասողիկ>> ՍՊԸ-ին մինչև 18.12.2015 թվականի ժամը 17:30-ը ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը:

5.3 Սահմանված կարգով՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել՝ <<Ասողիկ>> ՍՊԸ-ի և<<Վիամիր>>ՍՊԸ -ի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Լ. Հարությունյան ---------- (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Մարդոյան ---------- (ստորագրություն)

Մ.Սարդարյան ---------- (ստորագրություն)

Ա.Մկրտումյան ---------- (ստորագրություն)

Մ.Միքաելյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Հ. Աբգարյան

(ստորագրություն)